ՄԱՐԶԻ ՄԱԴԻՆԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1, 77^2, և 77^3 հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Մադինա համայնքի ղեկավարին՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերն իրենց կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոններով և ժամկետայնությամբ համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ և 41-րդ հոդվածների դրույթներին.
2) իրավական ակտերում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրականացնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներին համապատասխան.
3) նորմատիվ իրավական ակտերը գործողության մեջ դնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով պետական իրավական գրանցում ստանալուց հետո.
4) մշակել, հաստատել և պետական գրանցման ենթարկելուց հետո գործողության մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները.
5) համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ մրցութային եղանակով.
6) համայնքային սեփականության հողատեսքերը վարձակալության տրամադրել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան.
7) միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների, գանձումները ապահովելու, ապառքները կրճատելու ուղղությամբ.
8) հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.
9) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 25-ը:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ